

Նոնա ԴԱՎԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԿՐԱԿԵ ՇԱՊԻԿ» ՎԵՊԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՑ ՊՈՂՈՍ ԹՈՒՃՅԱՆԻ ՆԱԽԱՏԻՊԸ

Վ. Պետրոսյանի «Կրակե շապիկ» վեպի հարցադրումների շուրջ ժամանակին և այսօր էլ գրականագիտական, երբեմն նաև քննադատական սուր հոդվածներով հանդես են եկել և՛ հեղինակի գրչընկերները, և՛ գրաքննադատները: Մեր կողմից վեպի ուշադիր ընթերցումը, 80-ականներին արձակագրի անվան շուրջ քննադատական սուր ընթացքների և արգենտինահայ գրող Պ. Հաճյանի արձակ երկերի և խմբագրական գործունեության ուսումնասիրությունը բացեց մինչ այդ գրաքննադատության կողմից չբացահայտված փաստ. վեպում հեղինակի կերպարն ընդհանրաճանաչ է Վարուժան Շիրակյանի հետ, իսկ Պողոս Թուճյանի կերպարի նախատիպը արգենտինահայ արձակագիր, խմբագիր, հասարակական գործիչ Պետրոս Հաճյանն է:

Հոդվածում քննում ենք նաև այն հիմնական պատճառները, որոնք անցյալ դարի 30-ականներից տարբեր խրամատներ բերեց Սփյուռքի և հայրենի գրողներին ու հասարակական-քաղաքական գործիչներին, նկատում նաև, որ 80-ականներին գրական փոխառնչությունները սերտացման հուն են մտնում. կազմակերպվում են փոխայցելություններ, մրցանակի են արժանանում Սփյուռքի հասարակական-մշակութային գործիչներ, գրողներ: 1983-ի հոկտեմբերին Երևանում անց է կացվում սփյուռքահայ գրողների սեմինար-հավաքը, որին մասնակցում են Ավ. Ալիքսանյանը, Հ. Գալֆայանը, Ա. Կիրակոսյանը, Դ. Տեր-Հովհաննիսյանը և ուրիշներ: Գրչընկերների հարցադրումներին պատասխանում, նրանց ստեղծագործություններն արժևորող ելույթով հանդես է գալիս Վ. Պետրոսյանը: Բոլոր պատճառները կային, որպեսզի Վ. Պետրոսյանը վեպում ընդգծված, մերժելի չներկայացնի հայրենիք-Սփյուռք փոխառնչությունները:

Հետազոտության ժամանակ կիրառվել են վերլուծական-մեկնական, երբեմն նաև կենսագրական մեթոդները:

Բանալի բաներ՝ գրական հերոս, նախատիպ, գրական բանավեճ, սուր քննադատություն, առանցքային հերոս, խորհրդային գաղափարաբանություն, խորհրդատյաց գրող, Հայ Դատ, անհաշտություն, ազգային դիմագիծ:

Н. ДАВИДЯН

**ПРОТОТИП ПОГОСА ТУЧЯНА, ОДНОГО ИЗ ГЕРОЕВ
РОМАНА В. ПЕТРОСЯНА «ОГНЕННАЯ РУБАШКА»**

До настоящего времени с острыми литературоведческими, а иногда и критическими статьями о вопросах, поставленных в романе, выступают друзья автора по перу, литературоведы. Внимательное прочтение и исследование прозы, бурных критических процессов 80-х годов, связанных с именем прозаика и редакционной деятельности Ачяна раскрыло неисследованный до сего времени литературной критикой факт: в романе образ автора обобщается с Варужаном Ширакяном, а прототипом образа Погоса Тучяна является аргентинский прозаик, редактор, общественный деятель Петрос Ачян.

В статье рассматриваются события, которые с 30-х годов прошлого века распределили по разным окопам писателей и общественно-политических деятелей диаспоры и Родины, отмечали также, что в 80-х начали налаживаться литературные взаимосвязи: организовывали взаимные визиты, удостоились премии общественно-культурные деятели, писатели диаспоры. В октябре 1983 года в Ереване проходил семинар-слет армянских писателей диаспоры, в котором принимали участие Ав. Аликсаян, Х. Галфаян, А. Киракосян, Д. Тер-Ованнисян и др. С оценкой их произведений выступили В. Тертерян, В. Петросян, которые не отрицали взаимосвязи Родина-Диаспора, представленной в романе.

В ходе исследования были использованы сравнительно-аналитический и биографический методы обработки данных.

Ключевые слова: литературный герой, прототип, литературная дискуссия, острая критика, ключевой герой, советская идеология, советский писатель, армянский суд, непримиримость, национальный облик.

N. DAVTYAN

**THE PROTOTYPE OF POGHOS TUCHAN, ONE OF THE
HEROES OF THE NOVEL BY V. PETROSYAN "FIRE T-SHIRT"**

To this day the brothers of the quill and literary critics have come forward with sharp literary and sometimes critical articles about the issues raised in the novel. A careful reading and research of prose, the stormy critical processes of the 80's associated with the name of the prose writer and the editorial activity of Achyan revealed a fact that has not been discovered by literary criticism up to this time: the author is generalized with Varujan Shirakyan in the novel, and a prototype image

of Poghos Tuchyan is an Argentine novelist, editor, and public figure Davit Hajyan.

The article discusses the basic reasons that since 30-ies of the last century has distributed the writers and political figures in Armenia and the Diaspora to different trenches, it is also noted that in the 80's literary relationships begin to be established: mutual visits are organized, writers of the Diaspora, cultural and public figures are honoured with awards. In October 1983, a seminar-gathering of Armenian writers of the Diaspora was held in Yerevan, in which Av.Alexanian, Hilda Galfayan, Alice Giragosian, Diana Ter-Hovhannisyanyan and others took part. Answering to the questions of brothers of the quill, V. Terteryan gave an assessment of their works. There were all reasons for V. Petrosyan not to deny the relationship between the Motherland and the Diaspora presented in the novel.

The study used analytical and explanatory, and biographical methods.

Key words: literary hero, prototype, literary discussion, sharp criticism, key hero, Soviet ideology, Soviet writer, Armenian court, intransigence, national image.

Վարդգես Պետրոսյանի «Կրակե շապիկ» վեպը ընթերցողի դատին հանձնվեց 1986թ., հրատարակվեց Երևանում: Վեպի շուրջ ժամանակին ծավալվեց գրական բուռն բանավեճ, բավական է հիշել միայն ակադեմիկոս Ս. Սարինյանի հոդվածը՝ «Հավատի քննությունը»: Հետագայում իր հուշապատումի՝ «Ի հեճուկս (Հուշերի երկրի առասպելը)»-ի մեջ ակադեմիկոսը խոստովանում է, որ վեպի քննադատությունը սկսվեց իր հոդվածից անմիջապես հետո, վերաճեց նույնիսկ տարբեր խրամատներում հայտնված գրողների ու գրադատների թունալից կրակոցների (արձակագրի հասցեին շարտում էին ազգադավ, ծախս գրչակ, թուրքական լրտես բնորոշումները), երբ, նկատում է Ս. Սարինյանը. «...քննադատողի դերում հանդես եկող գրողներից որևէ մեկն իսկ որևէ առավելություն չունեի Վարդգեսի գրականության համեմատ»¹:

Վեպի հիմքում ընկած է ութսունհինգամյա Նունե տատիկի և նրա աշխարհասփյուռ գերդաստանի պատմությունը, և չնայած Նունե տատիկը քիչ է երկխոսում, բայց դիպաշարը ծավալվում է նրա ապրած տարիների, կորցրած

¹ **Սարինյան Ս.**, Հայոց գրականության երկու դարը/ Գիրք հինգերորդ, Ստեփանակերտ, «Դիզակ պրես» հրատ., 2009, էջ 485:

«Արդեն 1988 թվականն էր, Ազգային զգացմունքների բորբոքված պահին անհասկանալի, անակնկալ և անբացատրելի էր հայ-թուրք հարաբերությունների առերեսման, հանդիպադրման, երկխոսության այն մոտիվը, որ առաջադրում էր Վարդգեսը, մոտիվ, որ այժմ դարձել է դիվանագիտական քննարկման առարկա, ներառելով ցեղասպանության, հայ դատի, հատուցման և նմանատիպ այլ հարցեր: Գաղափարի լուծումն առկախ է մնում, և դա պատմական հոգեբանության զգացողություն է քանզի մոռացումի ու հիշողության արանքում առկա է պատմությունը. «Որևէ հայ և թուրք երբեք չեն կարող միայն երկուսով լինել, նրանց արանքում միշտ պիտի գա նստի երրորդը՝ պատմությունը», - կարդում ենք ակադեմիկոսի հուշապատումում:

բնաշխարհի, հայրենի Կարսի անկման, փսոռ-փսոռ տարտղնված իր գերդաստանի վերհուշի շուրջ, ուստի ինչ-որ տեղ կարող ենք ասել, որ Վ. Պետրոսյանի վեպը հուշագրության ժանրի տիրույթներում է: Նույն տատիկի հուշերում հայրենի Կարսի խաղաղ օրերն էին, ապա սպանդ ու ջարդ, հարազատների կորստի մորմոք, վերագտնումի նոր ուղիների փնտրտուք: Մինչև կյանքի վերջին օրերը հայ մամիկը իր գրպանում պահում էր հայրենի տան ժանգոտ բանալին և միայն մահվանից առաջ այն պահ տալիս թոռնիկին, ինչը նշանակում է, որ հոգում հավերժ պետք է ծրարել թերևս անհասցե կարոտը, կարոտ, որ խմորվել էր հայրենի տուն դառնալու սպասումներից:

Ճակատագիրը հետո ևս չծպտաց հայ մամիկին, վշտացավ որդիների համար. Արմենակը՝ ավագ որդին, ֆաշիզմի դեմ պայքարից տուն չի դառնում, անհայտ էր նրա ճակատագիրը մինչև այն պահը, երբ հեռավոր Հարավային Ամերիկայից ընտանիքը նամակ է ստանում, որտեղ երեսուն տարի լռությունից հետո Արմենակը նկարագրում է իր կյանքի ողիսականը, պատմում Ամերիկայում հայտնվելու, նորից ամուսնալու, երեխաներ ունենալու մասին, մյուս որդիներից Վռամը տեղափոխվում է Ռուսաստան, իսկ Սիրակը՝ Ավստրալիա: Հայի ճակատագիր է, թվում է՝ երևույթի հետ հաշտության եզրեր է փնտրում ընտանիքը (ահա՛ ինչու վեպը նախ վերնագրվեց «Դատարկ աթոռներ ծննդյան տոնին»):

Վեպի առանցքային հերոսներից է Նույն տատիկի սիրելի թոռ, Արմենակի որդի, գրող Վարուժանը. վեպի որոշ հատվածներում Վ. Շիրակյանի դրամատիզմի հասցված հոգեկան ապրումների նկարագրություններն են: Վարուժան Շիրակյանը, որ որբացել էր մեկ տարեկանում, երեսուն տարի հետո պարզում է, որ հայրը ողջ է, ապրում է ծայր հարավում՝ Արգենտինայում, ու շտապում է տեսնել նրան: Այստեղ է, որ արձակագիրն անդրադառնում է հայրենիք-Սփյուռք փոխադնություններին (ավելորդ չէ նշել, որ խորհրդային շրջանում հայրենիքի և Սփյուռքի, ի մասնավորի՝ հեռավոր «Արժանքինի» միջև գրամշակութային փոխադնություններն անհամեմատ թույլ էին: Քաղաքական հայացքների շարունակական հոգնեցուցիչ բախումները տարբեր ճակատներում էին կանգնեցրել հայրենի և սփյուռքահայ շատ գրողների):

Վեպի այս հատվածն ունի իրական նախապատմություն. Հայաստանի Գրողների միության նախագահ, նշանավոր գրող, հայրենի գրական կյանքի կազմակերպիչ Վարդգես Պետրոսյանը 1984-ի ապրիլի 23-ին «Թեքեան» մշակութային միության հրավերով Բուենոս Այրես էր ժամանել՝ Վահրամ Մավյանին նվիրված հուշ-երեկոյին մասնակցելու նպատակով, ու անմիջական տպավորությունների տակ իր՝ աղմկահարույց դարձած «Կրակե շապիկ» վեպում համայնավար դիրքերից հաճախ ենթակայական, ոչ իրատեսական գնահատականներ տվել դաշնակցական առաջնային գործիչներին, որոնց թվում, մեր կարծիքով, քաղաքական ավանդույթի հայտնի ուժով թիրախ էր դարձրել նաև

արգենտինահայ արձակագիր, «Արմենիա»-ի խմբագիր, «Գրիգոր Լուսավորիչ» կրթական հաստատության տնօրեն Պետրոս Հաճյանին:

«Կրակե շապիկ» վեպի ուշադիր ընթերցողը կարող է պարզ նկատել, որ վեպում Վարդգես Պետրոսյանի կերտած տիպարներից Պողոս Թուճյանի նախատիպն առաջին հերթին Պետրոս Հաճյանն էր՝ իբրև հայրենիքից եկած գրագետին ընդդիմադիր քաղաքական գործիչ, քան ստեղծագործող, արձակագիր, որին գրեթե անձանոթ էր ու անհաղորդ (անկեղծ լինելու համար թերևս ավելացնենք՝ գրական կյանքի շահագրգռություններում նրանք այդպես էլ շփման «հանդուրժելի» եզրեր չգտան):

Նման վերաբերմունքի գնահատության մեջ «հուշարար» դարձավ ճակատագրով «Սուրիայեն Արժանթին» նետված անհատի անգամ անուն-ազգանվան¹ ընտրության համահունչ եղանակը, որը նախատիպից նոր կերպար կառուցելու ճանապարհ դարձավ: Ինչպես նշեցինք, վեպի դիպաշարի կարևոր ճյուղավորումներից է գլխավոր հերոս, արձակագիր Վարուժան Շիրակյանի՝ հորն այցելելու նպատակով հեռավոր Արգենտինա մեկնելու պատմությունը: Հայրն առաջնորդում է նրան Բուենոս Այրեսի ակումբներից մեկը, ուր Շիրակյանը, ըստ էության, նույնքան վատ սքողված Վարդգես Պետրոսյանը, ծանոթանում է հայրենիք կորցրած հայերին: Այստեղ էլ հանդիպում է թերթի՝ հին դաշնակցական արժեքով «խմբագրապետ» Պողոս Թուճյանին: Առաջին իսկ թույլներից, ըստ Երևանից իջած գեղարվեստական խաղի պարտադիր պայմանականության, չի ստացվում զրույցը խորհրդային ոգով ստիպողաբար առաջնորդվող Շիրակյանի և իբրև թե խորհրդատյաց Թուճյանի², այսինքն՝ նախատիպ Պետրոս Հաճյանի միջև³:

«Զրույցի սկիզբը խաղ էր, չար խաղ... Սրահում լռություն էր. ոչ ոք նարդի չէր խաղում, ոչ ոք նույնիսկ սուրճ չէր խմում: Գուցե այդ լեղին էլ առաջին շերտն էր, ինքնապաշտպանական զրահ, կրիայի պատյան, և պատյանի տակ՝ Հայաստանով

¹ *Հաճյան-Թուճյան.*

Հատված հերոսների երկխոսությունից. «Ձեր ազգանունը «ճե-ռ»-ով է գրվում. Թուճյան: Ավելի հարմար կգար «Ջե-ն, Թուճյան»: «Թուճի պես պինդ եմ, այո»: «Պնդաճակատ» (Տե՛ս՝ «Պետրոսյան Վ., Կրակե շապիկ, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 288):

² *«Թուճյանը շատ մանր, բզով ծակած աչքեր ուներ, ճակատը նեղ էր, մեկը թփում է, ժամանակին բամփել էր նրա գլխին, գանգի մեջ բավական ազատ տեղ էր եղել, գանգը փափկել էր, տափակել, ճակատը կրճատվել էր, իսկ դեմքի մնացած մասերը մնացել էին նույնը, ծնոտները մանավանդ»- հեգնախառը երգիծում է արձակագիրը (Նույն տեղում):*

³ *Երկխոսության շարունակությունը դարձյալ հուշում է գրական նախատիպի՝ Պ. Հաճյանը լինելու մասին. «Ես վեց երեխա ունեմ: Չորսը տղա են: ...Երևի ինձնից էլ լավ գիտեն հայերեն»: «Լավ հայերեն եք սովորեցնում, որ պայքարե՞ն Հայրենիքի դեմ»,- հեգնում է Շիրակյան- Պետրոսյանը: «Հայրենիքի չէ, համայնավարների, ձեր դեմ»,- պատասխանում է Թուճյանը (Նշենք, որ Պ. Հաճյանը վեց երեխաների հայր էր, որոնք այսօր շարունակում են հայապահպանության՝ հորից ժառանգած գործը (տղաներից Արին ներգաղթել և այսօր ապրում է հոր երազած ազատ-անկախ հայրենիքում), կինը՝ Մոսի Գազանճյան-Հաճյանը մայրենիի ուսուցչուհի է Բուենոս Այրեսի «Գրիգոր Լուսավորիչ» կրթական հաստատությունում, որի երկարամյա տնօրենն ամուսինն էր):*

հիվանդ նույն նյարդն է թրթռում»¹: Այսքանից հետո Վ. Պետրոսյանի տված դիպուկ բնութագիրը «գրահ-բնագր» դարձած հայրենիքի նույն սիրով «ինքնապաշտպան» հիվանդությունն է, որը մի պահ կարող է միավորել երկու «ոխերիմ» բարեկամներին, բայց ոչ այս դեպքում: Սա ծանոթություն է՝ խրամատների հեռավորության վրա, ուր ազգայինը կտրուկ պիտի նահանջի համայնավար պարտադրված կեցվածքի դիմաց:

Բախումն անխուսափելի էր, և բնական էր Պետրոսյան-Շիրակյանի հանկարծահաս թունալից, հանդիմանական շեշտ կրող խոսքը՝ «...ծովից ծով Հայաստան էիք ուզում, օվկիանոսից՝ օվկիանոս Սփյուռք ստացաք»: Խորհրդային գաղափարաբանությամբ թրծված անհատը չէր կարող հասկանալ, որ Թուճյանն ու գաղթօջախի մտավորական դիմագիծ ներկայացնող այս մարդիկ ապրում էին առաջին հերթին ազգային ցավերով, որն, ըստ էության, «կրակե շապիկ է»: «Քո ցավը, Հայրենի՛ք, կրակե շապիկ է, // Հագնում եմ, վառում եմ, հանում եմ, մեռնում եմ...», - երգում էր արգենտինահայ թափառական երգիչ Արթուրոն, երգ, որն ապրեցնում էր հեռու հարավում ոչ իրենց կամքով բնավորված գաղութահայությանը: Հյուրասիրությունից հետո խմբագրապետ Թուճյան-Հաճյանը և Վարուժան Շիրակյանը մտնում են խմբագրատուն, ուր վերջինս նկատում է Երևանի կառավարական տան գունավոր լուսանկարը, զարմանում մի պահ, որովհետև, նրա կարծիքով, Թուճյանը հայրենասիրության շապիկը վաղուց նետել էր², բայց նույն պահին զայրույթը կրկնապատկվում է, երբ նկատում է, որ կառավարական տան աշտարակի դրոշը եռագույնն է: Այսքանը բավական է, որ Թուճյան-Հաճյան հայն ու մարդը խամրեն «հոկտեմբերյան դրոշի փայլից» կուրացած գործչի առջև³:

Գեղարվեստական այս պատառիկը, ինչպես տեսանք, իրականում կենսագրական հայտնի նախապատմություն ուներ, որին անդրադարձել է նաև Պ. Հաճյանը: Ժամանումի առաջին իսկ օրը կազմակերպված ընդունելության

¹ *Նույն տեղում*, էջ 285:

² «Հավատի քննությունը» հոդվածում ակադեմիկոսն անդրադառնում է Վ. Շիրակյան և Թուճյան երկխոսությանը և կատարում հետևություն. «Թող որ մարդիկ ազատ լինեն հավատի ու գաղափարի ընտրության մեջ, բայց հանուն ինչ-որ գաղափարի գործել հայրենիքի դեմ և ուրանալ հայրենիքը, դավաճանություն է ինքնին, քանի որ առանց հայրենիքի (ինչպիսին էլ այն լինի) անիմաստ բառեր են ոչ միայն սփյուռքն ու ազգությունը, այլև անհեռանկար է ամեն մի գոյություն: Բարոյական այս բարձրագույն սկզբունքի դեմ է մեղանշում Թուճյանը՝ կրքերի ծայրահեղ մոլուցքը հասցնելով չարության կենսաբանական բնագրի, որը և նրա կերպարի մեջ ընդգծում է գրոտեսկային տգեղությունը» (Տե՛ս՝ **Սարինյան Ս.**, Հայոց գրականության երկու դարը/ Գիրք երրորդ, Եր. 2002, էջ 335:), ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ Ս. Սարինյանը, հավանաբար տեղյակ չէր արձակագիր Վ. Պետրոսյանի թիրախում հայտնված նախատիպ Պ. Հաճյան արձակագրի ու խմբագրի և ըստ երևույթին նրանց հանդիպման և անհաշտության մասին:

³ «Երևի փոքր-ինչ երկար նայեց եռագույնին: «Քեֆերնոտը չեկա՞լ»,- հարցրեց մի ծերուկ: «Չէ, ինչո՞ւ, լավ գույներ են, միայն թե՛ շատ են խամրած»(դարձյալ հեզմանքի շեշտով նկատում է վեպի հերոս Վարուժան Շիրակյանը) (Տե՛ս՝ **Պետրոսյան Վ.**, Կրակե շապիկ, էջ 279):

Ժամանակ, վերհիշում է արգենտինահայ արձակագիրը, հայրենի գործիչը «...շաբթ ւը վիճելի եւ վե՛ճ ստեղծող գաղափարներու կարգին արտայայտած է մօտաւորապէս հետեւեալ միտքը. «Մեր միակ հայրենիքը ներկայ Հայաստանն է, ով որ չ'ընդունիր ասիկա, գոյութիւն չունի մեզի համար: **Հին քարտէսներ կախելը եւ անոնց նայիլը հաշիշ ծխել է**» (ընդգծումը Պետրոս Հաճյանինն է - Ն.Դ.)¹ :

Անտեսելու չէ, որ զուգադիպության բերումով Եղեռնի հիշատակի նախօրէն էր, որը, «խոհեմաբար» և բնականաբար, պիտի շրջանցեր Խորհրդային Հայաստանից եկած բարձրաստիճան հյուրը: «Ցաւալի է եւ շա՛տ տխուր, որ հայաստանցի մտաւորական մը,- գրում է արգենտինահայ մեր գրագետը, տեղի «Սարտարապատ» օրաթերթում,- Ապրիլ 24-ի վաղորդայնին, փոխանակ խօսելու մեր բռնագրաւուած հողերուն, Յեղասպանութեան եւ հայութեան արդար իրաւունքներուն մասին, փոխանակ իր ձայնը միացնելու հայ երիտասարդներու պահանջատիրական բողոքներուն, բարձրախօսին առջեւ կանգնած՝ հաշիշ կը նկատէ ամբողջ ողբերգութիւն մը, ամբողջ իտէալ մը, ամբողջ ժողովրդի մը բզքսուած, արիւնտած քարտէսը»²:

Ահա «անհաշտության» աններելի եզրը, ինչի հետևանքով ընդամենը երկու տարի անց պիտի աղճատված ներկայանար Պ. Հաճյանի տիպարը Երևանում լույս տեսած ու հեղինակի համար հիրավի «կրակե շապիկ» դարձած վեպում:

Անմիջապէս մեր կողմից ավելացնենք, որ «անհաշտությունը» նույն օրերին դրսևորեց առաջին հերթին Պետրոս Հաճյանը, որն այդ տխրահռչակ դարձած նշանավոր ելույթին հակադրվեց «խմբապետի» իր ամբիոնից՝ պաշտպանելով ազգային խորարմատ ու սքափ մեկնությունները:

Ի պատասխան համայնավար կույր ճամարտականության՝ երբեմնի ճարապետացին հրապարակում է ջախջախիչ **«Հին քարտէսներ եւ հաշիշ»** հոդվածը, որում, անդրադառնալով Վ. Պետրոսյանի՝ խորհրդային գաղափարապաշտությամբ ներծծված ակնարկին, նկատում է. «Ուրեմն այսպէս, «հին քարտէսներ» կախելը եւ անոնց նայիլը հաշիշ ծխել է Հայաստանէն եկող գրողի մը համար: Եւ որովհետեւ այդ «հին քարտէսներունն մէջ կը գտնուին

¹ **Հաճեան Պ.**, *Հարաւը Սփիւռքի մէջ*, Հալէպ, «Գիլիկիան հրատ.», 2008, էջ 293:

Եղերական ճակատագիրն իր հայրերի արյան միջով «անցուցած» գրողն իրավունք ուներ կոշտուկուտ արտահայտությամբ հակադարձելու Հայաստանից ժամանած գրողին, նրանց պաշտոնականացած «խորհրդային ազատութիւններու մասին, որոնք, այո՛, հաշիշի համ ունին եւ հաշիշի պէս ալ կը ներարկուին բոլորի՛ն, բոլորի ն» (Նույն տեղում, էջ 294):

Լավ է, որ դեռ Պ. Հաճյանը տեղյակ չէր «հաշիշի» լենինյան բաղադրության մասին, այն հոխորտացող ձևակերպումների մասին, երբ հաշիշի «պիտակի» տակ կրոնը և ազգային մտածողության ծիլ տվող տարրերը փորձում էին նույն գերեզմանային լռության մեջ մոռացության տալ: Տարօրինակ է, որ նույն տարիներին, ավելին՝ նույն վեպում Վ. Պետրոսյանն այլևս վերակառուցում է հրնթացս ազգային ըմբռնման իր պատուհանը՝ այս անգամ հայրենի ողջամիտ մտավորականների տարակուսելի, բոլորովին ուրիշ առիթի տակ բորբոքված հայացքի ներքո:

² **Նույն տեղում**, էջ 294:

Արարատը, Անին, Վանը, Կարսը, Տարօնի աշխարհը, այդ «հին քարտեզներուն» մէջ է որ գործուեցաւ Ցեղասպանութիւնը եւ անո՛նք է որ կը խորհրդանշեն Հայ Դատը, եւ անո՛նց համար ալեկոծուած է ամբողջ արտասահմանը, իսկ Հայաստանի երիտասարդութիւնը կը պոռայ «մեր հողերը, մեր հողերը, ուրեմն Վ. Պետրոսեանի վերելի յայտարարութիւնը համագոր է հետեւեալ միտքին. **«Մենք բռնագրաւուած հողեր չունինք, Հայ Դատ գոյութիւն չունի»** (ընդգծումները հեղինակինն են - Ն.Դ.)¹ :

Չնայած որ «Կրակե շապիկ» վեպի որոշ հատվածներում «բացասական», ինչպէս Սարիկյանն է նկատում, գրոտեսկային շեշտադրումով է ներկայացվում Թուճյան-Հաճյանի կերպարը, այնուամենայնիվ, թվում է՝ արձակագիր Վ. Պետրոսյանը նույն պահին հաշտության եզրեր է փնտրում՝ վեպի մեկ այլ հերոսի՝ Սեմ Շիրակի խոսքում ընդգծելով հետևյալ միտքը՝ «առանց Թուճյանների՝ չի՞ մեռնի այդ մեծ երազը, այդ Թուճյանները, անընդհատ փայտ ավելացնելով, չէ՞ որ անմար են պահում հայի արդար պահանջների մարմնող կրակը»²:

Այստեղ են ասել՝ և՛ այն ես նկատում, և՛ այս. : Սիրելի՛ արձակագիր Վ. Պետրոսյան, ո՞րն է երկու անհավասար լարերի վրա խաղալու պատճառը, չէ՞ որ քո «հակառակորդ» Պետրոս Հաճյանը կարծես քո «բանակից» չէ:

Իսկ իրականում որո՞նք էին պատճառները և ինչո՞ւ անհասկացվածության տասնամյակներ տևած սեպ խրվեց հայրենիքի և Սփյուռքի ազգային մտածողությունների միջև: Խորհրդային խորթ գաղափարից գատ, պատճառներից մեկը, նկատում են շատերը, այդ թվում նաև Պետրոս Հաճյանը, հայության երկու հատվածների միջև ազգային-մշակութային և լեզվական անըմբռնողականության մեջ էր: Թերևս տեղին է հիշել Շահան Շահնուրի «Զաթոսթե» պատմվածքը (այն անհամեմատ վաղ է գրվել): Պատմվածքում ընտանիքից մերժված թոքախտի վտանգավոր սահմանին հասած, բայց դեռ առողջ հայուհու՝ Պեաթրիսի կերպարով խորհրդանշվում է համայնավարներից մերժված Սփյուռքը. դաշնակցության «թոյնով վարակված» սփյուռքահայը տեղ չունի խորհրդային գաղափարաբանությամբ սնված հասարակության մեջ և առհասարակ հայեցի պատկերացումներում, սա է հեգնում Շ. Շահնուրը. «Եթե առողջ ըլլայիր, դո՛ւն, գաղթահայութի՛ւն, մենք քեզ տուն կը կանչէինք, Հայաստանի դռները կը բանայինք քու առջև: Բայց դուն հիւա՛նդ ես, դաշնակցութեան թոյնով վարակուած ես, դո՛ւն, գաղթահայութիւն...»³: Շ. Շահնուրը համակրանք չունէր համայնավար և դաշնակցական քաղաքական համակարգերի հանդէպ և սուր բախումների մեջ ջանում էր հեռու մնալ սև կամ սպիտակ բնութագրումներից, որոնք գատում էին հայության հատվածները: Պատմվածքի մեջ այլաբանական տարրերը նա

¹ *Նույն տեղում:*

² *Պետրոսյան Վ., Կրակե շապիկ, էջ 458-459:*

³ *Շահնուր Շ., Երկեր, հ. Ա. / Գեղարուեստական գործեր, Երևան, «Ազգ», 2016, 388 էջ 339:*

տարանջատում էր մարդկային կեցության հոսքերից՝ նախապատվություն տալով մարդու լինելության խորհրդի բացարձակ ըմբռնումին՝ վեր կանգնելով քաղաքական ներքին պառակտումներից: «Ուզած էի ըսել Երեւանի (տիկին Պէթրիսի ամուսինին), թէ գաղթահայութիւնը այլեւս հիւանդ չէ, թէ ան բուժուած է դաշնակցութեան մանրէէն, թէ այլեւս տուն պէտք է կանչել զայն: Որովհետեւ, որքան ալ որ համայնավարութեան մօտ ըլլամ, չեմ կրնար կէս մը գոնէ օտար չնկատել Ռուսահայն ու Վանեցին: Իմ փափաքս է հոն երթալ իմիններուս հետ, խմբովին»¹: Երկու այս «կեսերը» միավորելու պահանջը, որ դնում է ֆրանսահայ գրողը, հեզմանքի զգայնությամբ ծաղրում են մեր ազգային բաժանումների անմիտ ճիգերը:

Ավելի ուշ Պ. Հաճյանը նույնպես, վերհիշել տալով 1922-ի նոր՝ աբեղյանական ուղղագրության աղմկահարույց ընդունումը և դրա՝ Սփյուռքի կտրուկ մերժումը, եզրակացնում է, որ հարցի ընդլայնումը պետք է ներառել այդ նույն գրամշակութային համընդհանուր «պարտքերի» ցանկում. «Այդ թուականէն սկսած բացուած է վերք մը հայ լեզուի պատմութեան մեջ...», որն էլ դարձավ «Հայաստանի եւ Սփիւռքի խոչընդոտներէն» մեկը: «Մէկ լեզու՝ երկու ուղղագրութիւն. հայկական տարօրինակութիւն մը, երկուութիւն մը եւս: Ա՛լ ի՞նչ միասնականութեան մասին է խօսքը...»², - կարդում ենք «Հարիւր տարի, հարիւր պատմութիւն» պատմաքննական ուսումնասիրության մեջ: Նախանձախնդիր մոտեցումով սփյուռքահայ արձակագիրը հարցադրումը օրակարգից դուրս չի բերում, և այն վերստին բորբոքում է, այն էլ՝ պատասխանատվության անակնկալ զգացումով, ինչը և դառնում է «Կրակե շապիկ» վեպում Հաճյան-Թուճյան մարդուց, հասարակական գործչից երգիծանքի սուր՝ «գրոտեսկային տգեղության» հասցված հերոսի կերտման պատճառը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ *Նույն տեղում*, էջ 340:

² *Հաճեան Պ.*, *Հարիւր տարի, հարիւր պատմութիւն*, Պուէնոս Այրէս, “Armengraf Ediciones”, 2001, էջ 126: